Ծուշանիկ Կուրղինյան

Ծախվածը

Նա շատ ջահել էր, աչագեղ, քնքուշ,
Մանկական ժպիտ կար անբիծ դեմքին.
Միշտ մորն էր օգնում և ձայնով անուշ
Անվիշտ երգում էր— կայտառ էր հոգին:

Մի օր ծախեցին նրան լավ գնով՝
Հարուստ աղայի կին պիտի դառնար.
Եվ կոպիտ հայրը տուն եկավ գինով,
Վրդովեց կույսի քունն ու դադար:

Երկու շարք ոսկի, մատանի, մանյակ,
Եվ մարգարտից շքեղ փիրուշան
Հագցրին նրան. դարձավ հրեշտակ,
Մի քնքուշ կոկոն, նորածիլ շուշան:

Եվ իր փեսայի հսկա ձեռքն առած
Անձայն, անշշուկ հետևեց նրան,
Չքնաղ այն դեմքին գունաթափ, շշմած,
Սարսափ տարածվեց, երբ տեսավ սեղան:

Արբած քահանան քծնվող ժպտով.
— Կամքո՞վն է եկել,— կույսին հարցրեց,
Եվ պատասխանը իբր լսելով,

Աղայի նվեր ֆարաջան հիշեց . . .

Անցան տարիներ . . . մի օր ես նրան
Տեսա այլակերպ, հիվանդ, նիհարած . . .
Նա ուխտ էր եկել հինավուրց մատրան՝
Խնկով ու մոմով, ծոմ ու պաս պահած:

Նա ինձ հետ այնպես կարոտով խոսում՝
Վախկոտ հայացքը շուրջը ձգելով.
Եվ սրտաճմլիկ լալիս ափսոսում
Քաշած օրերը անկեղծ սոսկումով . . .

Նա շատ էր ծնում . . . և ուխտ էր եկել
Ջորավոր սրբի<ն> անծին մնալու.
Եվ պաղ քարերը այնպես գրկել՝
Կասես զգում էր, որ չէ ծնելու . . .

Մայիսի 21, 1907 թ .